

Արագածոտնի մարզպետը քաղաքացիների ընդունելություն է կատարում տարածքներում

10.12.2013



Քաղաքացիների ընդունելությունների կազմակերպման սահմանված կարգի համաձայն Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը մարզպետարանում ընդունելություն է կազմակերպում յուրաքանչյուր ուրբաթ օր: Ի լրումն դրա, յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա ընթացքում նա բնակիչներին ընդունում է տեղերում՝ այցելելով տարածաշրջաններ:

Դեկտեմբերի 9-ին մարզպետը քաղաքացիների ընդունելություն կատարեց Ծաղկահովիտ համայնքում, որին մասնակցեցին Արագածի տարածաշրջանի համայնքների բնակիչները:

Ընդհանուր առմամբ, մարզպետն ընդունեց 30 բնակիչ: Նրանք բոլորն էլ դրամական օգնության դիմումներով էին ներկայացել, որոնք բավարարվեցին: Միաժամանակ, լուծվեցին սոցիալական, բժշկական օգնության եւ անձնական բնույթի այլ հարցեր:

Դեկտեմբերի 10-ին քաղաքացիների ընդունելություն կազմակերպվեց Ապարանի քաղաքապետարանում, որին մասնակցեց Ապարանի տարածաշրջանի համայնքների 42 բնակիչ: Նրանք եւս դրամական օգնություն ստացան: Հընթացս եղան նաեւ աշխատանքային, բնակարանային բժշկական օգնության եւ այլ հարցեր, որոնց տրվեցին անհրաժեշտ պարզաբանումներ:

Դեկտեմբերի 12-ին քաղաքացիների ընդունելություն կկազմակերպվի Թալինի քաղաքապետարանում, որին կմասնակցեն Թալինի տարածաշրջանի համայնքների բնակիչները: